**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՁԱԽԱՓՆՅԱ ԹԱՂԱՄԱՍԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՋՄԱ-ԾՁԲ-2017/6**

ք. Երևան «11» դեկտեմբերի 2017թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Պռոշաբերդշին ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարապետ Մովսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **«Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում, քաղաքային տնտեսության սպասարկման կայանի կառուցման» ընթացքում տեխնիկական հսկողության աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3)՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 490,000 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Պոռշաբերդշին» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գլաձոր |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 08910676 |
| ՀՀ՝ 1510032335590100 | ՀՀ՝ 163538001609 |
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի մ/ճ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Աշոտ Կիրակոսյան | Կարապետ Մովսիսյան |
| ---------------------------------------- (ստորագրություն) | ---------------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՄԱ-ԾՁԲ-2017/6 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը |
| 1 | 71351540 | դրամ | 490,000 | 1 | Ջերմուկ համայնք | Շինարարական աշխատանքների սկզբից մինչև վերջ |

| | |
|---|---|
| *Ծրագրի անվանումը* | «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում, քաղաքային տնտեսության սպասարկման կայանի կառուցման» |
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2017թ. ՀՀ պետական բյուջե |
| *Պատվիրատու* | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| *Ծառայության անվանումը* | «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգում, քաղաքային տնտեսության սպասարկման կայանի կառուցման»-ի ընթացքում տեխնիկական վերահսկողության ծառայություն |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ նախագծի |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է բնդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք |

| | |
|---|---|
| | անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը)<br>• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը<br>• Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| *Հաշվետվության ներկայացման պահանջներ* | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ <u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br><br>• ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br><br>***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br><br>• ***<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• ***<u>Ավարտական հաշվետվությունը</u>*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

| NN | NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Միավորի արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 5 |
| | | Սպասարկման կայանի շին.աշխատանքներ | | | | |
| | | Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | E1-1612 | Տարածքի համահարթեցում բուլդոզերով (այդ թվում բարձրության հատվածում) | մ² | 1228.00 | 0.091 | 111.708 |
| 2 | E1-1593 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա /0.5մ³ շ/ռ / (այդ թվում ցանկապատի ժապավենային հիմքեր ) | մ³ | 56.00 | 0.665 | 37.231 |
| 3 | C310-7 | Բնահողի տեղափոխում 7կմ | տն | 104.00 | 1.832 | 190.483 |
| 4 | E1-1594 | 4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա /0.5մ³ շ/ռ / | մ³ | 26.00 | 0.895 | 23.268 |
| 5 | C310-7 | Բնահողի տեղափոխում 7կմ | տն | 49.40 | 1.832 | 90.479 |
| 6 | E1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք | մ³ | 20.00 | 4.081 | 81.629 |
| 7 | E1-969 | Բնահողի հետլիցք ձեռքով տոփանումով | մ³ | 20.00 | 1.182 | 23.647 |
| | | Միաձույլ ն/բետոնյա հիմքեր, մետաղական կոնստրուկցիաներ | | | | |

[1] Ծավալաթերթ-նախահաշիվը կազմվում է ներառյալ բոլոր աշխատանքների կատարման արժեքները:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 8 | E6-1 | B7,5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում 15սմ հաստ. | մ³ | 3.00 | 36.165 | 108.496 |
| 9 | E6-5 | Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից | մ³ | 6 | 62.889 | 377.334 |
| 10 | Շուկա | A500C d=8մմ ամրանի արժեքը | տն | 0.084 | 394.666 | 33.152 |
| 11 | Շուկա | A240 ամրանի արժեքը | տն | 0.053 | 394.666 | 20.917 |
| 12 | E6-83 | 500x500x20մմ, 50x50x4մմ թերթապողպատի կոշտության ներդիրների տեղադրում | տն | 0.476 | 828.108 | 394.179 |
| 13 | E6-82 | M20 խարսխային հեղույսների տեղադրում /48հատ/ | տն | 0.103 | 606.697 | 62.490 |
| 14 | E6-20 | Միաձույլ B-15 դասի բետոնից ժապավենային հիմքերի պատրաստում | մ³ | 7.50 | 50.095 | 375.715 |
| 15 | E9-51 | 200x200x6մմ կտրվածքի մետաղական խողովակներից սյուների (կանգնակների) տեղադրում | տն | 1.9 | 42.928 | 80.705 |
| 16 | Շուկա | 200x200x6մմ խողովակի արժեքը | գմ | 52.44 | 20.240 | 1061.370 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | E9-69 | Մետաղական 60x60x4մմ, 60x60x4մմ մետաղական խողովակներից ֆերմաների տեղադրում /6հատ/ | տն | 1.32 | 60.782 | 80.232 |
| 19 | E6-83 | 4 + 6մմ հաստ. թիթեղապողպատե ներդիրների տեղադրում | տն | 0.020 | 828.108 | 16.562 |
| 20 | Շուկա գնահաշվ | Մետաղական ֆերմաների արժեքը | տն | 1.32 | 817.630 | 1079.272 |
| 21 | E9-91 | Մետաղական կապերի և պահանջների տեղադրում 60x60x4մմ խողովակից | տն | 0.430 | 106.568 | 45.824 |
| 22 | Շուկա | 60x60x4մմ խողովակի արժեքը | գմ | 103.300 | 3.514 | 363.045 |
| 23 | E9-94 | N14 շվելլերից ծպեղային հեծանների տեղադրում | տն | 3.060 | 69.059 | 211.321 |
| 24 | Շուկա | N14 շվելլերի արժեք | գմ | 248.300 | 6.150 | 1526.959 |
| 25 | E6-83 | 125x80x7մմ անկյունակից ներդիր էլեմենտների տեղադրում | տն | 0.013 | 769.131 | 9.999 |
| 26 | Շուկա | Հեղույս M12 | հատ | 26.000 | 0.335 | 8.712 |
| 27 | E33-82 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում նախաշերտով | տն | 6.00 | 35.172 | 211.031 |
| 28 | E9-24 | Պրոֆիլավոր ցռնավոր ցինկապատ թիթեղից տանիքածածկույթի պատրաստում ԳՕՍՏ HC40-80-0,6 | մ² | 154.00 | 5.735 | 883.115 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 29 | E9-29 | Նույնը, պատային հատվածների | մ$^2$ | 65.00 | 9.463 | 615.067 |
| 30 | E12-60 | 0,55մմ հաստ. հարթ ցինկապատ թիթեղից ջրհորդանի տեղադրում պտուտակաթափ եզրով | մ$^2$ | 36.20 | 6.998 | 253.311 |
| 31 | E8-163 | Կայանատեղի հետին և կողային հատվածների պատի շարվածք 20սմ հաստ. կ/ձնի տուֆ քարից h=4մ | մ$^3$ | 26.00 | 21.440 | 557.435 |
| 32 | E8-59 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0.28 | 457.365 | 128.062 |
| 33 | E6-168 | Շարվածքի վերին միաձույլ ե/բետոնե գոտու պատրաստում B15 դասի բետոնից | մ$^3$ | 1.10 | 65.151 | 71.666 |
| 34 | Շուկա | A500C d=10մմ ամրանի արժեքը | տն | 0.052 | 392.806 | 20.426 |
| 35 | Շուկա | A240C d=6մմ ամրանի արժեքը | տն | 0.022 | 394.666 | 8.683 |
| | | Հատակ (ծածկված կայանատեղի) | | | | |
| 36 | E11-6 | Ավազ, տոփանված բնահող | մ$^3$ | 27.00 | 11.220 | 302.938 |
| 37 | E6-16 | Միաձույլ բետոնե հատակի սալի պատրաստում B15 դասի բետոնից 10սմ. հաստ. | մ$^3$ | 18.10 | 44.786 | 810.624 |
| 38 | Շուկա | A500C d=8մմ ամրանի արժեքը | տն | 0.703 | 394.666 | 277.450 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 39 | E11-69<br>E11-70<br>q=4 | Ցեմենտե հատակի պատրաստում 40մմ. հաստ. | մ² | 182.00 | 1.891 | 344.128 |
| 40 | E15-298 | Պատերի լավորակ ծ/ավազե սվաղ ցանցով | մ² | 140.00 | 3.203 | 448.410 |
| 41 | E15-521<br>E15-603 | Նույնի, ճակատային ներկում մածկապատումով | մ² | 140.00 | 0.885 | 123.868 |
| 42 | E8-190 | Գույքային տախտակամածի պատրաստում և քանդում ուղղահայաց մակերեսով | մ² | 70.00 | 0.907 | 63.507 |
| 43 | E6-21 | Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում B7,5 դասի բետոնից | մ³ | 2.3 | 37.436 | 87.226 |
| | | **Բաց տարածքի տուֆե քարե ցանկապատ դարպասներով** | | | | |
| 44 | E6-20 | Միաձույլ B-15 դասի բետոնից ժապավենային հիմքերի պատրաստում | մ³ | 24.50 | 50.095 | 1227.334 |
| 45 | E6-1 | B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում | մ³ | 0.50 | 36.074 | 18.037 |
| 46 | E6-5 | Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից | մ³ | 4.7 | 62.889 | 295.579 |
| 47 | Շուկա | A500C d=8մմ ամրանի արժեքը | տն | 0.067 | 394.666 | 26.443 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 48 | E6-109 | Միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B20 դասի բետոնից | մ³ | 3.330 | 102.734 | 342.103 |
| 49 | Շուկա | A500C d=10մմ ամրանի արժեքը | տն | 0.400 | 392.806 | 157.122 |
| 50 | Շուկա | A240C d=6մմ ամրանի արժեքը | տն | 0.043 | 394.666 | 16.971 |
| 51 | E6-168 | Միաձույլ ե/բետոնե գոտու պատրաստում B20 դասի բետոնից /այդ թվում եզրապատի/ | մ³ | 3.200 | 67.891 | 217.252 |
| 52 | Շուկա | A500C d=10մմ ամրանի արժեքը | տն | 0.220 | 392.806 | 86.417 |
| 53 | Շուկա | A240C d=6մմ ամրանի արժեքը | տն | 0.067 | 394.666 | 26.443 |
| 54 | E8-163 | Ցանկապատի պատի շարվածք 20սմ հաստ. կ/ձևի տուֆ քարից h=2,5մ | մ³ | 35.00 | 21.440 | 750.393 |
| 55 | E6-82 | Ներդիր դետալներ A500C d=14մմ, թերթապողպատից 150x200x10 /դարպասի/ | տն | 0.020 | 490.159 | 9.803 |
| 56 | Շուկա | Մետաղական ճոճվող դարպասի տեղադրում / 2 տեղ/ | մ² | 17.50 | 30.829 | 539.502 |
| 57 | E15-614 | Մետաղական մակերեսների 2 շերտ յուղաներկում հակաժանգով | մ² | 33 | 1.207 | 39.737 |
| | | Պահակակետ /կաթսայատան ներսում/ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | E46-80 | Քարե շարվածքի քանդում (բացվածքների համար) | մ³ | 1.20 | 8.407 | 10.088 |
| 2 | C310-7 տ.մ.կ.29 | Շին. աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 2.22 | 2.673 | 5.934 |
| 3 | E8-140 | 20սմ պեմզաբլոկե պատերի շարվածք 14,5մ2 | մ³ | 2.90 | 22.648 | 65.679 |
| 4 | E8-59 | Շարվածքի ամրանավորում Ac-1 | տն | 0.028 | 457.365 | 12.806 |
| 5 | E6-168 | Միաձույլ ե/բետոնե գոտու պատրաստում B20 դասի բետոնից | մ³ | 0.3 | 67.891 | 20.367 |
| 6 | Շուկա | A500C d=8մմ ամրանի արժեքը | տն | 0.023 | 394.666 | 9.077 |
| 7 | Շուկա | A240 ամրանի արժեքը | տն | 0.006 | 394.666 | 2.368 |
| 8 | Շուկա | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ. ապակեփաթեթով դռան տեղադրում /2հատ/ | մ² | 3.78 | 47.056 | 177.872 |
| 9 | Շուկա | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ. ապակեփաթեթով բացվող պատուհանի տեղադրում | մ² | 1.20 | 41.025 | 49.230 |
| 10 | E9-94 | N10 շվելլերից հեծանների տեղադրում ներդիր էլեմենտներով | տն | 0.08 | 69.059 | 5.525 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Շուկա | N10 շվելլների արժեքը | գմ | 8.84 | 4.321 | 38.201 |
| 12 | E6-82 | Ներդիր էլեմենտների տեղադրում 50x4մմ անկյունակից | տն | 0.01 | 700.524 | 7.005 |
| 13 | E34-390 | Գիպսակարտոնե առաստաղի պատրաստում մետաղական տատաներով ջերմամեկուսիչ շերտով | մ² | 8.000 | 14.045 | 112.360 |
| 14 | P5-119 | Ֆաներային ծածկի պատրաստում ջերմամեկուսիչի վրա ամրացնելով շվելլերին | մ² | 9.0 | 3.980 | 35.816 |
| 15 | E15-614 | Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում նախաշերտով այդ թվում ֆաներայի | մ² | 11.50 | 1.207 | 13.875 |
| 16 | E15-246-1 | Պատերի լավորակ գաջի սվաղ | մ² | 28.00 | 2.295 | 64.259 |
| 17 | E15-660 | Պատերի լավորակ լատեքսային ներկում մածկապատումով | մ² | 28 | 1.642 | 45.972 |
| 18 | E15-661 | Առաստաղի լավորակ լատեքսային ներկում մածկապատումով | մ² | 8 | 1.782 | 14.257 |
| 19 | E11-55<br>E11-56<br>q=2 | 30մմ հաստ. ցեմենտե հարթեցնող շերտի պատրաստում | մ² | 8.00 | 1.324 | 10.590 |
| 20 | E11-135 | Կերամիկ սալերից հատակի պատրաստում | մ² | 8.00 | 6.561 | 52.490 |
| 21 | E11-273 | ՄԴՖ շրիշակների տեղադրում | գմ | 10.20 | 1.081 | 11.029 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 22 | E11-5 | Բաց տարածքի ավազակոպճային շերտի պատրաստում 10սմ հաստությամբ | մ³ | 124.57 | 6.027 | 750.735 |
| 23 | E15-614 | Առկա մետաղական դարպասի և դռան 2 շերտ յուղաներկում (կաթսայատան) | մ² | 32.00 | 1.207 | 38.609 |
| | | Սպասարկման կայանի էլեկտրալուսավորություն | | | | |
| 1 | E33-621 | Հենասյան տեղադրում □108x4,5մմ L=6մ | հատ | 3 | 48.961 | 146.882 |
| 2 | E33-621 | Պատյանի տեղադրում □140x3,5մմ L=0,8մ | հատ | 3 | 19.553 | 58.658 |
| 3 | 8-363-1 | Բարձակ լուսարձակային □□1-0.2-1.5-□,15կգ | հատ | 3.00 | 32.859 | 98.578 |
| 4 | 8-525-1 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ C10Ա Legrand 404026 | հատ | 6.00 | 2.917 | 17.504 |
| 5 | 8-525-1 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ C32Ա Legrand 404031 | հատ | 1.00 | 3.949 | 3.949 |
| 6 | 8-525-1 | Ավտոմատ անջատիչ միաբևեռ B16Ա Legrand 403972 | հատ | 1.00 | 3.856 | 3.856 |
| 7 | 8-55-1 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ 63Ա Legrand 406412 | հատ | 1.00 | 13.733 | 13.733 |
| 8 | 8-574-55 | Ուժային ռելե երկբևեռ 25Ա Legrand | հատ | 1.00 | 19.409 | 19.409 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 412523 | | | | |
| 9 | 8-574-1 | Ղեկավարման կոճակ 20Ա Legrand 412916 | հատ | 1.00 | 12.539 | 12.539 |
| 10 | 8-612-5 | Վահանակ Mini S 2 մոդուլի համար Legrand 001302 | հատ | 6.000 | 4.263 | 25.581 |
| 11 | 8-612-5 | Վահանակ Mini S 8 մոդուլի համար Nedbox Legrand 601245 | հատ | 6.000 | 16.193 | 97.157 |
| 12 | 8-596-2 | Լուսարձակ լուսադիոդային 250վտ /Ատրումային/ | հատ | 6.00 | 48.936 | 293.618 |
| 13 | Շուկա | Սեղմակ ճյուղավորիչ 10/1,5-10 □731□ | հատ | 21.00 | 0.295 | 6.193 |
| 14 | 8-599-1 | Լուսատու 2x36վտ. լյումինեսցենտ լամպերով | հատ | 18.00 | 9.571 | 172.285 |
| 15 | 8-591-1 | Անջատիչ մեկտեղնավոր բաց հաղորդագծի | հատ | 3.00 | 1.449 | 4.347 |
| 16 | Շուկա | Տուփ ճյուղավորիչ բաց հաղորդագծի | հատ | 5.00 | 0.670 | 3.351 |
| 17 | 8-613-1 | Հաշվիչ միաֆազ երկսակագնային 50Ա | հատ | 1.00 | 22.457 | 22.457 |
| 18 | 8-141-1 | ввг 3x600 հատույթով [illegible] մալուխի անցկացում խրամուղով | գծ | 40 | 1.093 | 43.719 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 19 | 8-146-1 | ВВГ 3x4մմ$^{2}$ հատվածքով պղնձե մալուխի անցկացում պատով | գմ | 50 | 1.372 | 68.607 |
| 20 | 8-149-1 | ВВГ 3x2,5մմ$^{2}$ հատվածքով պղնձե մալուխի անցկացում պյան մեջ | գմ | 50 | 0.693 | 34.662 |
| 21 | 8-146-1 | ВВГ 3x1,5մմ$^{2}$ հատվածքով պղնձե մալուխի անցկացում պատով | գմ | 100 | 1.103 | 110.281 |
| 22 | 8-417-3 | SDR 11-Φ40x3,7մմ պոլիէթիլենայի խողովակի տեղադրում | գմ | 35 | 1.729 | 60.513 |
| 23 | E1-965 | 3-րդ կարգի բնահողի մշակում փոսորակներում | մ$^{3}$ | 3.00 | 4.313 | 12.939 |
| 24 | E1-961 | 3-րդ կարգի բնահողի մշակում խրամուղում | մ$^{3}$ | 8.50 | 2.314 | 19.671 |
| 25 | C310-7 տ.մ.կ.29 | Ավելորդ բնահողի բարձում և տեղափոխում 7կմ /3,5մ3/ | տն | 6.30 | 2.673 | 16.841 |
| 26 | E1-968 | Հետլիցք տեղի բնահողով | մ$^{3}$ | 8 | 0.968 | 7.742 |
| 27 | E1-968 | Հետլիցք ավազով | մ$^{3}$ | 2.5 | 3.649 | 9.121 |
| 28 | E6-1 | Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից | մ$^{3}$ | 0.216 | 36.165 | 7.812 |
| 29 | E6-13 | Հիմքերի պատրաստում B15 դասի բետոնից | մ$^{3}$ | 0.75 | 54.708 | 41.031 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 30 | Շուկա | Փ8AI ամրանի արժեքը | տն | 0.03 | 394.666 | 11.840 |
| 31 | 8-471-1 | Պողպատ անկյունային 50x50x5մմ L=2,5մ | հատ | 4.000 | 5.933 | 23.732 |
| 32 | 8-472-6 | Պողպատ շերտավոր 40x4մմ | գմ | 20.000 | 1.008 | 20.160 |
| | | **Ընդամենը** | | | | **18686.028** |
| | | **Այդ թվում սարք.** | | | | **36.70** |
| | | **Ընդամենը** | | | | **18649.330** |
| | | **Շահույթ** | **11%** | | | **2051.426** |
| | | **Ընդամենը** | | | | **20737.455** |
| | | **ԱԱՀ** | **20%** | | | **4147.49094** |
| | | **Ընդամենը** | | | | **24884.946** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Պոռշաբերդշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ,
գյուղ Գլաձոր
ՀՎՀՀ՝ 08910676
ՀՀ՝ 163538001609
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի
մ/ճ
Տնօրեն
Կարապետ Մովսիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՍՄ-ԾՁԲ-2017/6 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| համարը | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | Ընդամենը |
| 1 | 71351540 | տեխնիկական հսկողության ծառայություն | 490,000 | 490,000 | 490,000 | 490,000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պոռշաբերդշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ,
գյուղ Գլաձոր
ՀՎՀՀ՝ 08910676
ՀՀ՝ 163538001609
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի
մ/ճ
Տնօրեն
Կարապետ Մովսիսյան

-----------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*« 11 » նոյեմբերի 2017թ. կնքված*
*ՋՄԱ-ԾՁԲ-2017/6 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հh ______________________ | հh______________________ |
| ______________________ | ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<      >> <<                    >> *20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«11» նոյեմբերի 2017 թ. կնքված*
*ՋՄԱ-ԾՁԲ-2017/6 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը | Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը | պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն